

որոշ կարծիքով չունին դեռևս այդ ուղ-
ղութիւնը: Ինչի վերա է հիմնուած պ. Կա-
մակաբեր իր կարծիքը միզադրելով Ար-
կաթի օտար ազգութիւնների ուսումնարան-
ներին, որ նորա պետութեան օգուտներին
յարմար ուղղութիւն չունեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԶՎԻՅԵՐԻՍ

Մեր անցեալ տետրութիւնների մէջ մէջ,
այն է, «Աւստրիայի դաւաճումը» անունով
յօդովում, մենք աշխատեցինք ցոյց տալ,
ինչ յարաբերութիւններ կան այդ պետու-
թիւն կազմող ազգութիւնների մէջ: Մենք
տեսանք, ինչպէս այդ ազգութիւններից մէկը
(Գերմանացիներ), զանազան պատմական հան-
գումանքների պատճառով աւելի ոյժ և նը-
շանակութիւն ստացած լինելով, ճնշում է
մնացածները և զրկում է նոցա իրանց գա-
ւառական գործերը ինքնակալ կառավարելու
իրաւունքից:

Քանի մի ամիս առաջ, նոր ավստրիական նա-
խարարութիւնը որի գլուխն էր Կոնստանտին
վարտ, դիտաւորութիւն ունեցաւ ուրիշ ճանա-
պարհի հետեւելու, տարով Աւստրիա կազմող
ազգութիւններին այն իրաւունքները, որոն-
ցից նոքա երկար ժամանակ զրկված են ե-
ղել,—գաւառական ինքնակառավարութիւնը,
աւտոնոմիա, թէև համեստ և սահմանված:

Բայց նորա վերա յարձակվեցաւ գերմա-
նական զօրեղ կուսակցութիւնը,—և Հոհեն-
վարտը ստիպվեցաւ հրաժարական տալ:

Աւստրիան միակ եւրոպական պետութիւն
է, որ կազմված լինէր զանազան ազգու-
թիւններից:

Թիւրքաւանը, օրինակ, կազմված է Յո-
նիցի, Հայերից, Ռուսներէրից և Աւստրա-
կան զանազան ազգութիւններից: Պրուսիայի
կազմութեան մէջ մտնում են բացի Գերմա-
նացիներից և Լեհացիները: Չեխոսլովակի
սարակաւորութիւնը երեք ազգութիւննե-
րից կազմակերպվեցաւ,—Յրանսլացիներից
Գերմանացիներից և Իտալացիներից:

Բելգիայի մէջ, բացի Յրանսլացիներից
կան և Յրանսլացիները, մի ազգութիւն, որը
նմանապէս Գերմանացիների հետ կազմում է
մի այլ անկախ պետութիւն,—Հոլանդիա:
Վերջապէս Շվեդիան կազմված է Շվեդա-
ցիներից Նորվեգացիներից, իսկ Անգլիան

բանց յարաբերական սերը. իսկ ծնողաց տա-
րիւրական նախապայտանքը:

Վերջապէս Մալիօնի հրապարակաւ խաղաղու-
թիւնը թաւ էն կողմից և Միլիտը, նա էլ հետը
սկսեց խաղաղ:

Հաստատուելի թերթերը... կոտորակուց...
ու մէկ մէկու բան հասկացնելուց յետոյ, Միլիտը
աւելի պարզ հասկացրեց—գտաւ էն յարմար ժա-
մանակը երբ երեսները մէկ մէկու շատ մօտեցան,
ու յանկարծ էղբան բազմութեան մէջ պաշտօն իր
Մալիօնի...:

Տարբերակաւ ծնողքը բերանները բացեցին,
համակրող ժողովուրդը բղաւկեց նշան...
իսկ յարաբերական Միլիտը մի ոսկիանոց
մատանին իր Մալիօնի մատին հաղցրեց...:

Էս երևոյթն երբ հիմի չկան, իսկ եթէ դի-
տես որ կան, դրանք հետզհետէ անհետանում
են...:

Իմ կարծիքով էդ երևոյթն էլ էն բանը կա-
րելի է հետեւանել, որ առաջուկ բարիկենդան-
ները և առհասարակ դրա մի մասն մին ջանի
տօն երբ էն օրերը մէկն են, երբ ընտանեկան
ճնշումը կենտրոնը աղատութիւն է ստանում:

Դրանք այն ցանկալի միջոցներից մէկն են, որով
միջոց էդ օրը բանտարկված կենտրոն և զբաղմունքը
իրաւունք է ստանում, աղատ խոսելու, դատելու,
և իր ձգտողութիւնները յայտնելու:

Էդ սովորականից դուրս պատահած անցքերը,
որոնք հրաբուխի պէս դուրս են ցայտում էդպի-
սի տօն օրերում, դրանք մի իրաւացի բողոք
են ամբողջ տարուկա կենտրոն աղատութիւնը խող

Անգլիացիներից, Եօթանգացիներից և Իր-
լանդացիներից:

Երբ այդ զանազան պետութիւնների մէջ
մի ազգութիւն փոքր ի շատէ ոյժ էր ըս-
տանում, նա սկսում էր ճնշել մնացած ազ-
գութիւնները, աշխատում էր զրկել նոցա ի-
րանց անհատական և ազգային աւանանու-
թիւններից, աշխատում էր բոլորովին միաց-
նել նոցա տիրապետող ազգութեան հետ:

Այդ ուղղութեամբ վարվում էր միշտ, և
մինչև այժմ այդ գործունեութեան եղանա-
կին հետեւում է Պրուսիան հպատակ լեհա-
ցիների վերաբերութեամբ: Ամբողջ գաւառ-
ները, որոնք առաջ լեհական էին, դարձան
հիմի գերմանական: Յիշեալ տերութիւնը
զրկում է թող ազգութիւնը ոչ թէ միայն
իր քաղաքական և գաւառական ինքնակառա-
վարութեանց,—այլ արմատից կտրում նորա
անհատութեան վերջին նշանները, խլելով յաղ-
թված ազգութեանը նորա ազգային լեզու
անգամ: Այդպէս լեհական քանի մի գաւառ-
ներում տիրապետում է այժմ գերմանական
լեզուն:

Եւ այդ բոլորը կատարվում է, չնայելով,
որ այդ տեսակ ձգտողութիւնները ոչ թէ
միայն իրանց նպատակին չեն հասնում, այլ
առաջ են բերում մեծ մասամբ հակառակ
հետեւանքներ: Ազգային զգացմունքը զարթ-
նում է, ճնշված ազգերի մէջ զարդանում են
ամենաստատիկ կրքեր, որոնք շատ անգամ
ամբողջ պետութիւնների անկման պատճառ
են լինում:

Այդպէս, Գերմանացիների խտութիւն-
ները Աւստրիայի հպատակ ազգութիւնների
վերաբերութեամբ, զարթեցրին ավստրիական
Սլավոնների և Ունգարացիների մէջ ազ-
գային զգացմունքը, և ծնեցին այն արեւել-
ները, որոնց մէջ էլ այժմ էլ կարող յաղ-
թել ավստրիական պետութիւնը:

Այդպէս Ֆինլանդիայի Իսլանդիայի թագա-
ւորի խտութիւնները հպատակ Հոլանդիայի
վերաբերութեամբ, որը այն ժամանակ հա-
մարձակվեցաւ կաթոլիկութեանց բողոքական-
ութիւնը անցնելու, պատճառեցին սարա-
փելի և արեւահեղ ապստամբութիւնը, որի
հետեւանքն էր Հոլանդիայի, կամ ինչպէս
այն ժամանակ նորան անվանում էին Բատա-
ւիայի քաղաքական անջատումը:

Նախապայտանքների, և հասարակական յարա-
բերութիւնները ընդհանուր օրովութիւնների դէմ,
իսկ էդ սովորութեան մէջ էլ են ևս լաւ բանն
եմ տեսնում, որ համարակալ կարող եմ պ. Թաւ-
պակաւներն անել, ի դուր էք կարծում թէ ան-
ցեալ դարերը և պատմական դերութիւնը, մեր հա-
սարակութեան ստորին և միջին դասից, արմատա-
խիլ է արել ամէն տեսակ յառաջադիմութեան, և
չարժողութեան ընդհանակութիւն...:

Այդ դասը մտած չէ, քանի որ կենդանութեան
կայծերը երևում են իր մէջ:

Ամէն շարժողութիւն թէ չափազանց լաւ, և մին-
չև անգամ խելիւրտակ կողմից ապացուցութիւն է
կենդանութեան:

Բայց ցաւալին էն է միայն, որ էդ պատահող
անցքերը հետզհետէ նուազում են, և գոյցէ պէտք
է՝ չուտով բողոքովին անհետանան, առանց ներ-
կայ դարուս կրթութեան համապատասխան
նոր երևոյթն եր յառաջ բերելով:

Հիմի մտած է ինձ քու ուրիշ հետաքրքրութեան
էլ բաւականութիւն տալ:

Դու տեսար հին բարի կենդան օրերում
ամէն տեղ բազմութիւն, ամէն տեղ շարժողութիւն,
աղքատը ու հարուստը, զիմն ու խելիքը, ջանքը
ու պառաւ միջոցակալ խօսում են, բղաւում, դա-
տում, վիճում, ծեծվում, ծաղրում, և մէկ մէկուց
էլ ամենին չեն վերադարձում: Բայց չը կարողա-
ցար տեսնել դրանցից ոչ մէկը էս տարուկայ
բարիկենդանին:

Նայիր աղօթած զաւարթիւն մէջը, տես, ամէն տեղ
լուսթիւն, ամէնքը իր բանին, ամէն տեղ թիւում

Նշանակէ և այդ վերջին պետութեան մէջ,
որը բաղկացած էր Վալոններից և Ֆրա-
նսներից այդ երկու ազգութիւնների մէջ
երկառաւորութեան հետեւանքն այն էր, որ
պետութեան մի մաս բաժանվեցաւ և կաղ-
մեց մի անկախ պետութիւն Բելգիայի ա-
նունով:

Թէև այդ օրինակները բաւական համո-
զեցիչ են, մենք մեզ թող կտանք դարձեալ
մի նշանաւոր օրինակ բերելու:

Յրանսլան, որը XV-րդ դարից սկսած
շարունակ կենդրոնանում էր, այն աստիճանին
հասցրեց այդ քաղաքական եղանակը ան-
ցեալ դարի վերջում և արդեն դարի բա-
կեցում, որ երկրի մէջ նշանակութիւն ու-
նեցող անձերը անհրաժեշտ համարեցին ջն-
ջել Յրանսլայի գաւառական բարբառներն
անգամ: 1794—թուին պատգամաւոր Գրե-
զուար ասում էր, «քաղաքացիներ. դուք բաղ-
ունիք Յրանսլացիներ կանչվելու... դուք
քաղաքական դաշնակցութեան ձեռ անիծում
էք,—ուրեմն հրաժարվեցէ և լեզուները մէջ
տարբերութեանց: Լեզուն պիտի մի լի-
նի, ինչպէս և ինքն հասարակապետութիւնը
մի է: Հիւսիսից մինչև Հարաւ, Յրանսլայի
բոլոր տարածութեան վերայ, թող թագա-
ւորէ միակերպ բառաբար, ինչպէս և տիրում
է միակերպ զգացմունքը սրտերիդ մէջ: Դուք
պիտի ատէք զանազան լեզուները...»:

Եւ սա լոկ խօսք էր միայն: Թէ կենդ-
րոնական, թէ գաւառական կառավարու-
թիւնները ամեն ջանք էին գործ դնում այդ
նպատակին հասնելու համար: Այդ քեզ-
ծումն կենդրոնական կառավարութեան զօ-
րութեան, աղ գաւառական առանձնութիւն-
ների՝ ճնշումն ի դուր չանցաւ Յրանսլայի
համար: Յրանսլայի թուլութիւնը, նորա
անկումը, վերջին քսան տարիների նորա բո-
լոր կրած չարչարանքները,—մենք համոզված
ենք, ամենամօտիկ կապ ունեն երկրի մէջ
տիրապետող հրեշաւոր կենդրոնական սիս-
տեմայի հետ:

Ուրեմն մենք տեսնում ենք, որ այն ուղ-
ղութիւնը որ մենք գտնում ենք Աւստրիայի
մէջ, նշանավոր է փոքր ի շատէ և այլ և-
րոպական պետութիւնների մէջ:

Բայց միթէ ազգութիւնների այդ սար-
ստիկել կռիւը, և յաղժողի այդ անբնական
վարմունքը յաղժվածի հետ, անհրաժեշտ

ու ժանդոտուած երեսներ: Փողոցները էլ ինչ են,
ինչ որ առաջին օրը: Ձրադուած հայացքներ, դան-
դաւներ, կասկածներ, մի խօսքով կենտրոն թըմ-
րութեան և անշարժութեան սիրուն նշաններ:

Նն ծիծաղելու և թաք ու թուք անցքերը, որ
դու տեսնում ես, դրանք մեր կենտրոն ամենօրեա
անցքերն են: Նթէ սովորականից դուրս բանի էլ
հանդիպում է աչքը, լաւ իմաստ, որ էդ բոլորը
հնարովի ու չինովի են, մի խօսքով իրանց բնա-
կան զուարթութիւնը չունեն...—ինչի:

Էնդուր համար, որ հիմի մեր սրտի վերայ մի
շատ գեղեցիկ, գեղարարիկ և սիրունիկ խոց
է դուրս եկել, որին ասում ենք կարօտութիւն:

Փետր. 24-ը մեր պատմական կենտրոն ամենախոր-
հրդաւոր օրերից միմն է: Էդ էն վերջին ճգնա-
ժամն է, երբ Մեծն-Վաղարշը կրօնի պահպա-
նութեան համար դէնք բարձրացրեց և իր 1036
վրաներով նահատակվեց:

Եթէ էդ նահատակողները լուսաւորչական կրօնը
պաշտպանելով ընդհանուր քրիստոնէութեանն էլ
օգուտ տուին, հէջ էդ փաստովը աւելի է հաս-
տատում էն կարծիքը, որ Վաղարշանք պաշտ-
պանելով իրանց ազգային ինտերեսը (հայերի
մեծ ինտերեսը էր վախճող կրօն էր) կարողացան
առաջը առնել և արեւմտեան քրիստոնէութեան
սպառնացող փոթորիկին:

Հիմի նայիր կախարակական գաւաթիւն մէջը մի
ուրիշ երևոյթ էլ տես:

Պ. Ուսեալ-Նէլզընանցի կիւիլը ճակատագրի
հրամանով մտած ձգած է տան մէջ. իսկ ինքը

երևոյթ է ամեն տեղ, որտեղ գտնվում են
երկու կամ աւելի ազգութիւններ:

Հնգիւ թէ.—որովհետեւ Եւրոպայի դա-
մաքի վերա կան պետութիւններ, որոնք այդ
կողմից բաղդաւոր բացառութիւն կարող են
համարվել:

Զվեցերիայի երկրի փոքր տարածութեան
վերա, ապրում է երեք ազգութիւն. Յրան-
սլացիներ, Գերմանացիներ և Իտալացիներ:
Այդ ազգութիւններից միմն կալվեակաւ
դաւանութեան է պատկանում, միւսը բո-
ղոքական, երրորդը կաթոլիկ: Ամբողջ Զվե-
ցարիայի ուսումնարաններում առարկաները
աւանդվում են այն լեզվով որը գործածական
է տեղի համար: Թէ քաղաքական վարչու-
թիւնները թէ գաղափարները գործ են դը-
նում տեղական լեզուները: Այդ բոլորը մեզ
համար պարզ ապացոյց է, որքան այդ փոքր
պետութեան մէջ պատվութեան ազգութիւն-
ների փոխադարձ իրաւունքները:

Զվեցերիայի կազմող բոլոր մասերը զգու-
նեն, որքան նոքա հարկաւոր են միմեանց հա-
մար, նոքա դեռն թէ ազգութիւնների մէջ
տարածախնութիւնը կարող է ընդհանրու-
թեանը մեղաւել, կարող է ամբողջ պետութեան
թուլութիւնը հետեւանել և մինչև անգամ
հասցնել նոցա սրտերի համար թանգ հաս-
րակապետութեան կազմակերպութեան ոչնչ-
ացնելուն:

Այդ պատճառով նոքա մէկ մէկին պաշտ-
պանում են և պատվութեան միմիանց:

Ընդհանուր Պրուսիայում, օրինակ, եր-
կու ազգութիւնները դիպչում են միմիանց,
որոնցից մէկը (մանաւանդ հիմի) զօրեղ է և
բողոքովին հարկաւոր չէ համարում որ միւս
(Լեհացիներ) զոյութիւն ունենայ: Այժմ
հասկանալի է Պրուսիայի տերութեան ար-
համարհանքը դէպի Լեհացիները, որոնց նա
1867 զօրով միացրել է Հիւսիսային գերմա-
նական դաշնակցութեան հետ, իսկ այժմ
միացնում է ընդէմ նոցա կամքի, գերմանա-
կան դաշնակցութեան հետ:

Ուրիշ կողմից վերջին տարիների անդա-
դար հարուածներից թուլացած Աւստրիան
սկսում է շողորթել իր պետութիւն կաղ-
մող ազգութիւններին, և աշխատում է ըս-
տանալ նոցա համակրութիւնը: Այդ պատ-
ճառով նա ժամանակ առ ժամանակ կամ

պ. խէջքեանցն էլ յիմարութեան հրամա-
նով իք միմեան թողած, վրացիէ իր հարկանի
ժող. ու նրա մուկի վերա է լաց ըլում... ու
զուրկը պատ է պատ խփում... համաձայն իր
հասկացած կօմսպոլիտական համոզմունքին:
Գրեկց տանտուէրը տեսնելով էդ ընտելեան հա-
կառակ վարմունքը, նկատեց պ. Ուսեալ խէջ-
քեանցին:

— Տճ դուրսումս դ. քու տան մեռելը թո-
գած, էկել իս իմ հիւանդի վերա իս լաց ըլում:
Էդ վրդանցի աղաթ է...:

— Յիմարութեան աղաթ է, պատասխա-
նում ենք ուսեալ-խէջքեանցի փոխարէն:

Վերջացնում եմ խօսքս աղիւ ընթերցող մի
քանի իմաստուն իրաւաներ տալով միւս տարուկայ
բարիկենդանի համար:

Եթէ ուղեւաս փող դատել—դժուար չէ: Առաջին
դէպքի համար հարկաւոր է պարտք անել իսկ
երկրորդում՝ բարեգործական նպատակի անունով
թատրոն ներկայացնել: Սուտ ուղեւաս խօսել—
ամօթ չէ, դուարձանալու օրեր է, մարդ ուղեւաս
վերադարձ—կարելի է, ասա քաղքի համար է:

Եւ սորա նման հաղարարու աղիւ բաները, ո-
րոնք արեւ էս, բայց որոնք լաւ կը լինէր եթէ էլ
չանկաւ:

տալիս է կամ խոստանում է այս կամ այն գաւառին ինքնաշնորհաւորութիւն:



Թիւրքիան նման գրութեան մէջ գտնվելով, միւսինոյն կերպով է վարվում: Նա անգաղար վերանորոգութիւններ է տեսնում այս ինչ կամ այն ինչ հարստի ազդութեան իրաւունքները ապահովելու համար: Սակայն նա դեռեւ չէ հաստատվել այդ ուղղութեան մէջ, և այդ է պատճառը, որ նորա դործունէութեան եղանակի մէջ մենք յաճախ պատահում ենք հակասութիւններ: Սորա օրինակ կարող է լինել վերջին նորա վարմունքը Բոսնիա դաւառի ազդային ուսումնարանների վերաբերութեամբ:



Ինքն Ֆրանսիան, վերջապէս, սկսում է ըմբռնել զաշնակցութեան քաղաքական ձեւի օգուտները: Այդ ուղղութեան նշոյնները մենք նկատել ենք Փարիզի վերջին ապստամբութեան ժամանակ: Վերջին կայսրութեան ժամանակին նա արդէն յայտնվել էր գաւառական լինելու արհեստի պահպանելու և նոյնպէս գտնվելու հոգսերի մէջ: Հիմնվում էին Ֆրանսիայի Ֆրանսական և գերմանական օրաթերքները, զբաղւածներ և ընկերները: Ներքինը, — և տերութիւնը սորան չէր արգելում բոլորովին: Ինքն Նապոլեոն III-ը 1867 թուին այցելութիւն անելով Էնգաւի մէջ, իր համակրութիւնը յայտնեց գերմանական լինելուն, Հռէնոսեան գաւառներում նորա պատանդութեանը նշանակութիւն տալով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— „Allgemeine Zeitung“ լրագիրը հազարից հոգում է, որ Թիւրքիայի տերութիւնը հրատարակել է նորերում Բոսնիա դաւառում մի հրովարտակ, որի պարտութեամբ բոլոր ուսումնարանները պիտի մտնեն տերութեան հսկողութեան տակ: Առհասարակ Թիւրքիայի գաւառական ազգութիւնների և գաւառային տնտեսականութիւնների մեծ մասը ազգային անկախութիւն են, և պահպանվում են ոչ թէ տերութեան, այլ հասարակութեան, ժողովրդի ծախսով: Ուրեմն ինչ իրաւունքով, ասում է թղթականը, տերութիւնը կարող է սեփականացնել իրան այն ուսումնարանները, որոնց համար նա մի դրոշ անգամ չէ ծախում: Հրովարտակը ամբողջ Բոսնիայում աստիկ անբաւականութիւն և յուսահատութեան ազդակ յարուցեց: Այդ առիթով Սերբիայի և Հարաւային Սլոնոյիայի օրաթերքները հրատարակեց Բոսնիացիներին սկսել զենքը ձեռին անողորմ ապստամբութիւն Թիւրքիայի դէմը:

Կ. Պոլսի „Մասիս“ լրագրի մէջ կարդում ենք. „Ոստիկանութեան պաշտօնէին հրամանաւ Կ. Պոլսի մէջ զենք կրելն արգելուցաւ: Նմանապէս դուրսէն զենք գտն ալ արգելուցաւ, հրաման ստուգելով մարտատան, որ այսուհետեւ օտար երկիրներէ կամ գաւառներէ եկած զենքերը դրուէ:“

— Ռուսմանիայում նկատվում է կոմունիստների շարժողութիւն: Կազմվում են քաղաքական յեղափոխութեան նպատակով աւազակների խմբեր: Նորերում հասարակականները դիտմամբ այրենք Վալարեստի բանդը, որտեղից հրդեհի ժամանակ քաղաքական յանցանքներից շատերը կարողացան փախչել: Այդ բոլոր շարժողութեան նըպատակը հասարակականութեան հաստատելն է:

— „С. Петерб. Вѣд.“ լրագիրը տպում է Կ. Պոլսից տույցած մի հեռագիր փետրվարի 25-ին (մարտի 8-ին). „Կարճ ժամանակում Թիւրքիայում հրատարակված կը լինի նոր տպագրութեան օրէնքը:— Հայ-կաթոլիկները չուտով ընտրելու են իրանց համար մի նոր պատրիարք:“

— Բաղէնի դքսութեան պատգամաւորների ժողովը ընդունեց փետրվարի 28-ին մի օրէնք, որի զօրութեամբ հոգեւորականներին արգելվում է ուսումնարաններին մէջ դաստաւութիւնը: Բայցի սորանից ախ հոգեւորական միաբանութիւններին, որոնք առանց տերութեան թղթութեանը երկրի մէջ զետեղվեցան, արգելվում է օրէնքի զօրութեամբ թէ քարոզներ անելու, թէ եկեղեցական զանազան պաշտօններ վարելու:

— Երեւելի հասարակականության Խորհուրդի Մաձ-ձինին փետրվարի վերջին օրերում վարձանկեցաւ Պիլա քաղաքի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՐԱՍԻՐ ԱՐԽԻՊԻՉ

III

Վալդի գաւառ օրից անցաւ հինգ ամիս: Չմուռ էր, իւր երկայն անկիւնը դիւրեւնում: Ժամի ինն էր:

Թիւրքիա քաղաքի խեղճ մասերում հինգ խեղճ տանից հաղիւ թէ մի տան մէջ ճրագ էր գտնվում, որովհետեւ խեղճ մարդիկ տուն գաւառ պէս ալ խառնվելին չուտ ընել կամ յոգնութիւնից կամ ճրագվաւորութի ծախսը խնայելուց, իսկ հարուստների տներում...:

Նրանց տներում մէկ ճրագի տեղ շատ ճրագներ էին վաւում:

Եւ որքիւ կերպ էր կարելի. մէկ ճրագ կարելի էր թոււ, մէկ ճրագ ստաւ օվում (սեղանատանը), մէկ ճրագ սպալում (ննջարանում), մէկ ճրագ պէլ էր զին իւր յում (նախասենեակում), մէկ ճրագ դաւում (դահլիճում), մէկ ճրագ... և այլն... և այլն... ճրագներ էին վաւում:

Բայց Արարիմ Արխիպիչի տան այս սովորական ճրագներից դուրս, որիւ շատ ճրագներ էին վաւում և դանդաղ տեսակ ճրագներ. նեֆտի լապիւններ, կարտօֆիլի կամ ստէօրինի մոմեր, շանդօր, մեղրամոմ և այլն:

Որովհետեւ այդ երեկոյ խնձոյք կար դրանց տանը:

Չանազան տեսակ ֆաշտօններ, դրօփէք, կալաններ, տեսակ-տեսակ կաւեր, մէկ մէկու ետեւից կանգնում էին Արարիմ Արխիպիչի պօղէզ-դի տանը:

Եւ այդ պօղէզում բարձրանում էին զանազան հարուստ անեքից զանազան պատուաւոր կանայք և մարդիկ:

Կանայք մէջ օրինակի համար երևում էին. Պրդ-տօրովի կին Ռիփիսիմէն, ամփոփված մախմուր սաւառի տակ:

Կուտօրենց Թինաթիւնը, խրուած կարմիր մախ-մուր քաթիլում,

Բաւթօնց Գալաւաթօնը, կօլօրում մէկ անա-դին շատ թանկագին ուղայի շալում:

Երկայնց Սօնիան սե մախմուրի տալում, Միգէնց Նասալիան, դարձեալ կօլօրում առանձին մէկ ինչ սաւառական միւրաբարութիւն դօր-նօտայի մաղից, լայն և երկար պղնձաւոր վա-րատնիկով և այլն և այլն:

Սրբա ամէնքը նախասենեակ հանելու ակէս, բարդաւորացում էին իւր թիւսաւոր ծառային վերջ-նի տալ իրանցից սալօփները և տալմաները:

Իւր թիւսաւորը հասկանում էր այդ, և շատ քրն-քուլութիւնով կատարում էր երջանիկ և նախան-ձեկի պաշտօնը:

Կանայք հետեւում էին և մարդիկ, Մինաի (Մի-նաս) Ալօլինարովից, Մարտին Լուկիչը (Մար-տիրոս Ղուկասի որդի), Խման Կիրիլիչը (Օհանէս Կիրիլոսի որդի) Վանիկէն (Օհանէս), Նիկիլը Արտիւրը և այլն և այլն:

Սրբա ամէնքը մախմուրներ, սալօփներ, դօր-նօտայի կապուշօններ, պալտօններ, կալօններ և այլն հանելուց յետոյ, դրսուում էին մեծ հայելիի առաջ, որը իսկ այդ նպատակի համար էր կալ տուած նախասենեակում և ապա մտնում էին դահլիճ:

Դահլիճը հիւսնալի բան էր:

Այդ դահլիճը, ինչպէս Թիւրքիայի հարուստների ամէն դահլիճները, անպատճառ բաժանուած էր արկայով երկու մասը: Մէկ մասի անունն էր ան-պատճառ. դալ, միւսինը գօստիննայա (ինչպէս ասում են Թիւրքիայի հարուստ հայ կանայքը):

Ամէն մէկ հիւրի դահլիճը մտնելու պէս, Շու-շանա Բուղդանիւնը ուրախ շինած դէմքով, կա-նանչ հարուստի մէջ շքեղացած մօտենում էր, ող-ջունում էր կամ անպիտան Վրացիներ կամ Ռու-սներն լեղում (որովհետեւ Հայերն խօսալը ամօթ է առհասարակ Թիւրքիայի հարուստների տներում) ու յետոյ կտրտուելով, նազով, չիլիսիլիլանելով հեռանում էր ու մօտ էր բերում կամ իր անդա-նիկ Վալդիային կամ իր Վարօնի:

Վարօն ընդամենը երեք օր էր ինչ դուրս էլ եկել

*) Այս բառի թարգմանութիւնը չի կարողացաւք գտնել:

մէկ բարձր ուսումնարանից. նա հիւսնալի ուսու-նէն էր խօսում շատ շապ-շապ, էնպէս որ, մէկ բերանը բացանելով՝ քսան ու հինգ խօսք միմանց հետ կապած, մէկ անդամից էր արտասանում և արտասանում էր գեղեցիկ:

Առ հասարակ Վարօն մօր, հօր և ընկեր աղջ-կերանց հետ ուսուներէն էր խօսում վերոյիշեալ ձևով, իսկ մէկ քանի երիտասարդների հետ և իր եղբոր հետ ֆրանսերէն, թէ և այդ լեղվում կաղում էր փոքր ինչ:

Հայերէն խօսողների վերայ դարձանում էր ու եթէ որ և ինչ հայ երիտասարդ պատահէր, որ հա-յերէն խօսար նորա հետ, Վարօն անպատճառ զըզ-ուանելով կասէր li done! ու շապով, կպնելով ֆիդօն դիւ. ОСТАВЬТЕ МЕНЯ СЪ ВАШИМЪ ар-МЯНСКИМЪ ЯЗЫКОМЪ (Թողէք ինձ ձեր հայերէնով) կը փախչէր, կը խառնէր հիւրերի մէջ: Վալդիան հիւրերին մօտենալու պէս, որին ասում էր „bon-jour“, որին „моё почтение“, որին „բարեւ ձեզ“, որին „ողջից“ որին տեսնելով միայն, մէկ անորոշ բացազանցութիւն էր անում „ա, ա“, որին սիմ-լով ձեռքը՝ դուրսը քաշ էր գցում ու յետոյ խոր-հրդաւոր ձևով, բարձրացնելով մի և նոյն լայնա-տարած ջագարան ման սե մաղիւրով—գրովը աչքերը ջրում էր հիւրի աչքերին ու ինքնուրոյն արտասանում էր „դու՛կա“, որին ընդունելով...:

Մէկ խօսքով շատ մաղադներ էր խաղում ու իսկոյն աջու ձեռք տանում էր՝ դրսուում առաջ իր ուսումնարանի նշան սե միւրքը ու յետոյ իր նորահաշակ (à lamode) կարած պոչազգես-տը (ֆրակը):

Արարիմ Արխիպիչը նկատում էր Վալդիայի և Վարօնի քաղաքագրութիւնները, նա տեսնում էր այս ամէնը, նա երջանիկ էր:

Շատ երջանիկ էր:

Իսկ Շուշանա Բուղդանիւնը, օ, նա՛ շատ աս-տիճան բարձր էր իր մարդու երջանկութիւնից:

Նրան աչքալույս էին անում:

Նրան ասում էին „բարդաւոր մէր իս (բաղ-դաւոր մայր ես) Վալդիի ու Վարօնի պէս վաւ-ղիք (որդիք) ունի“:

Նա զգում էր, որ արխիպիչից կարմրում էր, նա-յիւրով Արարիմ Արխիպիչին, ժպտում էր կօկէտ ձևով և իսկոյն դառնալով դահլիճի այն դռները, որը բացվում էին նախասենեակից, նա, Շուշանա Բուղ-դանիւնը, ամբողջութեամբ ու ծածուկ խոր հոգից էր քաշւում, զգալով իր բոլոր կրքոտ կազմուած-քի մէջ մէկ անթարգմանիկ հոսանք...:

Նա սիրում էր իր մարդ Արարիմ Արխիպիչին, իր անդրանիկ Վալդիային, իր Վարօնի և...:

Ինչ պատահեց, ինչ պատահեց, խոսեցաւ հիւրե-րի մէջ:

Մէկ անկիւնում որտեղ նստած էր անհոգ եր-ջանիկ Արարիմ Արխիպիչը, նրա բաղկաթոփ բոլորի շուրջ հաւաքուել էին հիւրերի մեծ մասը:

— Վնչ բռնանամ իս, ծղորտաց Շուշանա Բուղ-դանիւնը ու թուա դէպի այն անկիւնը և տեսաւ իր սիրելի ամուսին Արարիմ Արխիպիչին անշըն-չացած:

Էսպէս եւ լսել եւ Արարիմ Արխիպիչի պատ-մութիւնը:

Գ. Զ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի մարտի մուտքը 1871 թուին հա-սել է մինչև 48,440,804 ու կամ 7,057,952 ուսու-նում անցել 1870 թուի մուտքը: Ոսկու և ար-ծաթի բերած քանակութիւնը հաւասար է 5,948,288 ուսուրին: Ռուսնի գերազանցում է 3,975,696 ուսու-նում նախընթաց տարուայ բերած քանակութիւնը:

Հոլլանդական „Nieuwe Rotterdamsche Cou-rant“ լրագիրը ասում է, որ նորերում կոմս Շամբօրը Դօդէիստ քաղաքում մի մեծ ճաշ է տուել իր կուսակիցներին: Արեղջ ճաշը բաղա-ցած էր պատվալ կերակուրներից:

„Միգը Հայաստանի“ լրագրում կարդում ենք, որ այս օրերում Թիւրքիայում լայն տեսաւ Վլիւի „Համառօտութիւն ֆիլիքական աշխարհագրու-թեան“ գրքից: Ա. մեծ. օրիորդ Գալանէ Թուլա-նիսեանի թարգմանութեամբ:

Գարբիէլ եպիսկոպոս Ալվադեանը որ քանի մի տարի առաջ մասամբ թարգմանած էր ռուս առակալիստ Կրիլովի գրվածները—այժմ ամբողջու-թեամբ թարգմանեց նոյն աշխարհաբար լեզվով և ի լայն ընծայեց:

Փարիզի բնակիչները շատերը արդէն քաղաքի

պաշարման ժամանակ սկսեցին դադրել, լայն գաղ-թողներ թիւը աւելի աճել սկսեց Կոմունայի ժա-մանակ: Ասում են, որ այն ժամանակից սկսա-Փարիզից դադրած բնակիչների թիւը հասնում է մինչև 300,000:

Այս մարտի 19-ին Թիւրքիայի երաժշտական ըն-կերութեան դահլիճում կը լինի Կոնցերտ բա-րեգործական նպատակով:

„Կովկաս“ լրագիրը պատմում է, որ Ռուսմանիայ մի նոր լրագրի „Prutulu Miraculu“ խմբագրի-յայտնեց թէ նա իր թերթի հրատարակութիւն պիտի դադարեցնէ, որովհետեւ իր հայրենակիցներ 12 միլիոն ժողովրդի մէջ գտնվեցաւ միայն մ-ցանկացող յիշալ լրագիրը ստանալու—այն է երեք ամսով բաժանորդ գրվելով:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՉԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(մարտի 15-ին):

ՈՍԿԻՆ, (պօղիմպեդիալ) . . . 6 ու, 8 1/2 կոպ

ՓՈՒՆԱԿԱԿՈՒՐ (բարաթ) Պօլսում

Վճարելիք (էրա Ոսմանեան) . . 6 „ 75 „

ԲԱՄԲԱԿ Երևանում . . . 5 „ 40 „

„ Ամերիկայի սերից . . 6 „ — „

ԲՈՒԹԹ Դուրս . . . 9 „ — „

„ հասարակ թարգմանի, 6 „ 50 „

ԹԱՄԲԱԿՈՒ Տրապիզոնի . . . 11 „ 50 „

„ Սամսոնի № 1 . . 26 „ — „

„ „ № 2 . . 19 „ — „

„ „ № 3 . . 14 „ 50 „

ՇԱՔԱՐՈՒ Ռի (Բրոքիւ) . . . 9 „ 50 „

„ „ միւս տեսակը . . 9 „ 20 „

„ զազանից տրանցիլ

(առանց մաքսի) . . . 5 „ 50 „

մաքսը վճարած . . . 9 „ 20 „

ՇԱՔԱՐԱԿԱԿՈՒ Ռի . . . 8 „ 75 „

ՎԱՃԱԿ Լիվանի լաւ . . . 13 „ 50 „

„ Մարտիկից, ցածր . . 9 „ 80 „

„ Մօլո, շատ լաւ . . 15 „ — „

ՊԱՊԵՐԸ . . . 11 „ 45 „

ԿԼԵԿԸ . . . 20 „ 50 „

ՆՇԱԿԻՐ . . . 10 „ — „

ԵՐԿԱԹ . . . 2 „ 20 „

մինչև 3 „ 50 „

ՄԵԻ զազանից . . . 5 „ 20 „

ՄՈՄ . . . 12 „ — „

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԻՎ ՎԱՃԱՌԱՆՈՑ:

(մարտի 14-ին)

ԼՈՆԴՈՆ.—մի ուրբալի ամէ 32% պէնս (փոխա-նակ 40 պէնս):

ՓԱՐԻՉ.—մի ուրբալի ամէ 348 սանախ (փոխա-նակ 400 սանախ):

ԲԱՄԲԱԿ Նիւ-Եօրկի ամէ ֆունտը 22% պէնս (մօտ 56 կոպ):

ԼԻՎԵՐՊՈՒԼ, բարակի վաճառանոցը հաստատ է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարոն Խաչատուր Աբգարեանցը մօտիկ օրերում կ'տայ Կօնցերտ Ներսիսեան Հին ուսումնարանի դահլիճում:

Ինքը կ'ածէ զանազան ասիա-կան և եւրոպական եղանակներ ճիւ-նուրի, թաուի և ջուլթակի (սկրիպկի) վրայ: Կը մասնակցեն հոյ թատրո-նասէրների խումբը, Խաչատուր խորիստները և երաժշտները:

Կօնցերտի պրօգրամման կը դուրս գայ առանձին աֆիշներով իր ժա-մանակ: